

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐԳԱՐԻ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆ

(ՆՈՐԱԳԻՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՓԵՍՈՍ)

Ամսէ մը ի վեր է որ Հոովմէ հասաւ եւ տարածուեցաւ ամէն կողմ մեծ եւ կարեւոր գիւտի մը լուրն, որ բոլոր գիտնականներն եւ օրաթերթերն իսկ զբաղեցուց։ Այս գիւտն է Նդեսիոյ Թագաւոր Արգարի Թուղթն առ Քրիստոս եւ Քրիստոսի պատասխանն առ Արգար, գրուած քարի մը վրայ։ Սակայն զարմանալին այն է որ մինչդեռ Նեսեքիոս կը ըսէ թէ՝ ինքն այս Թղթակցութիւնը գտած է Նդեսիոյ քաղաքին դիւանատան մէջէն, նախնաբար գրուած ասորերէն լեզուաւ ապա Թարգմանուած յունարէնի, այս նորագիւտ արձանագրութիւնն ալ գրուած է ոչ թէ ասորերէն լեզուաւ՝ այլ դորիական-յունարէնով մը, եւ գրուած Նգեսիայէ փարսախներով հեռու Նփեսոսի (=Այա-սուլուք) բլուրին վրայի Թագաւորաց յատուկ հին պալատին դրան վրայ։ Նոյն իսկ «Վարդապետութիւն Ադգէի առաքելոյ» գիրքն, որուն հնագոյն օրինակն այժմ կը պահուի Պետերբուրգի Մատենադարանին մէջ, Արգարի Թղթակցութեան վերաբերեալ ամենահին մատենան ըլլալով՝ ասորերէն գրուած է եւ որուն մէջ Թղթակցութիւնն ալ ասորերէն յառաջ կը բերուի։ Աւելցունենք նաեւ թէ Քրիստոսի ժամանակ Պաղեստինի մէջ յունարէն չէր գործածուեր այլ արամերէն. եւ շատ հաւանական է թէ Արգար ալ արամերէն լեզուն կը խօսէր։

Ահաւասիկ Նեսեքիոսի վկայութիւնն ալ, Պտմ. Եկեղ. Ա. Ժգ (Ժբ)։

«Ունիս քեզ վկայութիւն յիշատակաց ի դիւանէ անտի Նդեսացւոց քաղաքի, յորում Թագաւորեացն Արգար։ Ի յիշատակարանս հասարակաց յորս վաղեմի անցք պատմութեան քաղաքին եւ գործք քաջութեան Արգարու դրոշմեալ կային, գտաք եւ զայսոսիկ պահեալ մինչեւ ի մեր իսկ ժամանակս. եւ չէ ինչ անդէպ լսել զնոյն Թուղթ (Արգարու եւ Քրիստոսի), զոր առեալ է մեր ի տանէ անտի դիւանին, եւ յԱսորւոց բարբառոյն յեղեալ ի Յոյն՝ օրինակ զայս... »։

Նփեսոսի մէջ գտնուած արձանագրութիւնը յաջորդ երեսը գրուածն է, որուն պատկերը ձեռք անցունելով Պր. Ա. Արտոնց՝ հաճեցաւ մեզ դրկել ինքնաբերաբար։

+ ΑΥΓΑΡΟΛΟΚΑΜΑΤΟΠ
 ΦΑΡΜΑΚΩΝ ΚΑΙ ΒΑΡΥΝΤΩΝ
 ΚΑΙ ΤΟΥΣ ΜΕΝ ΜΑΞΙΣΤΟΝ ΟΙ
 ΗΟΤΙ ΟΙΟΥΣ ΤΟΥΣ ΚΑΙ
 ΕΔΕΗΝ ΤΟΥΣ ΤΑ ΗΜΕΙΣ
 ΕΙΣ ΤΗΝ ΚΑΤΑ ΤΗΝ ΕΜΝΗΝ
 + ΤΑΝΤΙΣΤΡΑΦΕ
 + ΜΑΚΑΡΟΙΣ ΤΕΥΣΑ
 ΠΙΣΤΕΥΟΥΣΙΝ ΕΛΑΖΗ
 ΤΑ ΠΑΝΤΑ ΑΝΑΜΕΦΟΝ
 ΤΟΝ ΑΝΤΙΣΤΑΝΤΑΝ

ΧΗΝ ΟΥΔΕΘΩΣ ΤΗΡΗΛΑΦΑΝΤΙΕΝ ΟΜΙΕ
 ΟΥΓΙΝΟΜΕΝΩΝ ΤΥΦΛΟΥ ΕΑΝΑΒΔΕΠΙΝΗΤΕΙΣ ΚΑΛΟΝ
 ΒΑΣΑΝΙΣΘΗΝΟΥΣ ΕΡΑΠΕΥΕΙ ΕΚΑΝΗΚΟΥΣ ΕΡΠΙ
 ΑΤΑΒΑΤΕΤΟΝ ΟΥΑΝ ΟΥΠΟΙΕΙΣ ΤΑΤΑΝ ΟΥΙΟΙΕ
 ΟΧΜΕΙΝ ΤΟΝ ΑΣΟΟ ΕΚΑΘΕΡΑΡΕΥΣΑΝ ΗΚΟΥΣΤΕΡΟΙΤΑ
 ΗΤΙΣ ΕΔΕΚΕΝ ΑΜΦΟΤΕΡΟΙΣ +
 ΕΝ ΤΑΝΤΑΡΑΒΟΥΔΕΣ ΠΟΤΟΝ ΑΙ ΑΝΑΝΙΟΥΤΑΧΥ
 ΝΕΜΟΙΜΕΝΩΡΑΚΩΓΕΤΕΡΑΝ ΤΕΤΑΡΤΕΡΕΜΩ
 ΕΠΕΡΙΑ ΕΡΕΓΡΑΥΑΤΟΙΕ ΔΙΝΗΤΟΙΣ ΕΛΕΟΝΕΣ
 ΙΠΡΟΣΤΟΝ ΑΡΟΤΙΛΑΝΤΑΜΕΚΑΙ ΕΜΑΝΑΛΗ
 ΧΗΚΑΙ ΤΟΙΣ ΕΥΜΕΝΩΣΙΝ ΚΑΙ ΤΗ ΠΟΛΙΤΗΜΕΝΗΜΕ

ΟΣΟΛΥΜΩΝ ΧΕΡΙΝ ΗΚΟΥΣΤΕΜΟΙ
 ΠΑΤΙΝ ΕΠΡΟΥΕΚΑΘΑΡΙΖΙΚΑΙΑΚΑΒΑΡΤΑΠΝΕΥΜΑΤΑΚΑΙ ΕΝΟΜΑΚΕΚΑΛΛΙΣ
 ΑΙ ΤΑΥΤΑ ΠΑΝΤΑ ΑΚΟΥΣΑΣ ΤΑ ΕΡΟΥΚΑΤΑΝΟΥΜΕΘΕΜΗΝ ΤΟΤΕΤΕΡΟΚΤΩΝ ΔΥΟ
 ΚΑΙ ΚΑΤΑΒΑΣΕΚΤΟΥ ΡΑΟΥ ΠΟΙΕΙΣ - ΑΥΤΑΔΙΑΤΟΥΤΟΓΡΑ + ΑΣ
 ΠΟΙΩΝ ΔΕΒΙΚΑΤΑΓΓΥΖΟΥΣΙΝ ΕΟΥΚΑΙΒΟΥΛΟΝΤΑΙ ΚΑΚΩΣ ΕΙΣΑΠΗΛΙΣΕ
 ΕΩΣ ΡΑΚΟΤΕΜΕΜΗΝΙΣΤΕΥΟΥΣΙΝ ΕΝΕΜΟΙ ΚΑΙ ΟΙΟΜΕΝΩΡΑΚΟΤΕΣ
 Ν ΠΑΝΤΑΔΙΑ ΑΠΕΣΤΑΛΗΝ ΠΛΗΡΩΤΑΙ ΤΑ ΠΑΝΤΑ ΚΑΙ ΜΕΤΑΤΟΠΗΡ
 ΜΦΩΑ ΠΟΛΤΕΛΛΩΤΙΝ ΑΤΩΝ ΜΑΘΗΤΩΝ ΗΜΟΥΣ ΙΣΕΙΔΕΤΑΙΣ
 ΑΤΩ ΜΕΧΩΡΙΣ ΤΩΝ ΝΩΝΕΣΟΥ ΗΛΑΤΑΥΤΗΣ ΕΞΙΝΗΧΙΝ ΠΟΤΕ +

Εν δὲ τῇ ἐκδόσει τοῦ παλαιῦ κειμένου

Այս արձանագրութիւնը գտնողը Պրոֆ. Բոհրմանն (Bohrmann) է, որ Վիեննայի Համալսարանին կողմէ պեղումներ կը կատարէ Եփեսոսի մէջ, եւ նա իր գիւտն հաղորդած է վերջերս Հոռվմի մէջ գումարուած Քրիստոնէական հնախօսութեան Համաժողովին։ Ժողովականներէն ոմանք թեր եւ ուրիշներ դժմ խօսեցան արձանագրութեանս վաւերականութեան վրայ։ Իսկ Համաժողովէն դուրս՝ ղրեթէ բոլոր գիտնականք վիճեցան եւ քննադատեցին զայն։ Մենք ալ մեր կարգին քննելով այս նորագիւտ արձանագրութիւնն, որ մասամբ կապ ունի մեր ազգային պատմութեան հետ, արդիւնքը կը հաղորդենք Բանասերի հետաքրքիր ընթերցողներուն։

Նախ կը դնենք այստեղ արձանագրութեանս ընթերցումն, անկիւնաւոր [] փակագծերու մէջ նշանակելով կոտրած եւ անհետացած տառերը։ զլիսագիր (հայերէնի մէջ չեղագիր) տառերով կը նշանակենք պակասաւոր մասերն, համեմատութեամբ Եւսեբիոսի։ Իսկ հասարակ () փակագծերու մէջ կառնենք այն բառերն որոնք կը պակսին Եւսեբիոսի մէջ։ Ապա կուտանք այս երկու նամակաց թարգմանութիւնը, դարձեալ հիմն բռնելով Եւսեբիոսը, քանի որ նորագիւտ արձանագրութիւնս տեղ տեղ աւելի Եւսեբիոսին կը մերձենայ քան Լաբուրենայ, այն է «Վարդապետութիւն Ադգէի առաքելոյ» մատենին, որ անշուշտ իր նախնական ձեւին մէջ իբր բնագիր ծառայած է Եւսեբիոսի, չնայելով որ վերջինս կըսէ թէ ինքն արդէն յունարէնի թարգմանուած գտաւ այս թղթակցութիւնն Եղեսիոյ զիւնանաւան մէջ։ «Գտաք եւ զայսոսիկ պահեալ մինչեւ ի մեր իսկ ժամանակս... յԱսորւոց բարբառոյն յեղեալ ի Յոյն»։

Ընթերցումն արձանագրութեան.

1 | (+) Αὐγαρος οὐκαμὰ τοπ[αρ]χὺς ΕΔΕΣΗΣ Ἰνδοῦ ἀγαθὸ ὁωτηρὶ ἀναφανεντι ἐν πολὺΝ(1) Ἰε[ρ]οδόλυμων χερὶν. Ἡκουσθε μοι τὰ περὶ σου καὶ τῶν ὁῶν ἱαματῶν ὡς ἀνευ | 2 | φαρμακῶν καὶ ὁωτανῶν ὑπ[ο] σ[ο]υ γινομενων. ΩΣ ΓΑΡ ΛΟΓΟΣ τυφλοὺς ἀναδλεπιν ποιεὶς χῶλους πε[ρι]πατιν ΚΑΙ λεπτροὺς καθαρὶζὺς καὶ ἀκαθάρτα πνεύματα καὶ δεμονας ἐκβαλλΕΙς | 3 | καὶ τοὺς (μ)εν μακρονοσ[ια] δαδανίζομενοὺς θεραπευ(ε)υεις καὶ νεκροὺς εγΕιρΕΙς. [Κ]αὶ ταῦτα πάντα ἀκουσας περὶ σου κατὰ νοὺν εθεμην το ετερον τῶν δυο | 4 | η οτι σοι ου(2) (Ἰνδοὺς) του Θεου(3) καὶ [κ]αταδας εκ(4) του ουρανου ποιεὶς ταῦτα η (οτι σοι) εἰ (ο) [γ]ιος ΤΟΥ ΘΕΟΥ (καὶ καταδας εκ του ουρανου) ποιεὶς(5) ταῦτα. Διὰ τουτο ΤΟΙΝΥΝ γραψας | 5 | εδενθην σου σκυλῆναι προς μ(ι)ε καὶ το παθος ο εχω θεραπευσθαι. Ἡκουσθε μοι γα[ρ] ποι Ἰουδαιοι(6) κα-

(1) Ի քաղաքին, բոս Լաբուրենայ՝ «Ի քաղաքիդ», որոնք ճիշտ են. իսկ Եւսեբ. «ἐν τόπῳ=յայիսարէին»։ — (2) Եւս. «δὲ εἰ». — (3) ὁ θεός. — (4) ἀπό. — (5) ποιῶν. — (6) Καὶ γὰρ ἴκουσα ὅτι καὶ Ἰουδαῖοι. — (7) κακῶσαι δε. — (8) μικροτάτη μοι ἐστί.

ταγογγυζουσι(ν) σου και βουλονται κακως δαι(7) . Πολις δε μ[οι] | 6 | εστιν μικροτατη(8) και σεμνη ητις εξαρκει αμφοτεροις (+)

7 | (+) Τα αντιγραφεντα παρα του δεσποτου(9) δια Ανανιου(10) ταχυ-
[δ]ρομου ΤΟΠΑΡΧΗ ΑΒΓΑΡΩ . | 8 | (+) ΑΒΓΑΡΕ μακαριος ο(11) πιστευσας
εν εμοι μη εωρακως με . Γεγραπτε (ω)ιω(ψ)η(υ) γαυ περι εμου οι εωρακοτες(12)
με μη πιστευουσιν(13) ενε μοι(14) (και) οι μη εωρακοτες ΑΥΤΟΙ | 9 | πισ-
τευουσιν(15) και ζηδον[τε] . Περι δε ου εγρανας(16) μοι ελθειν προς δε
δεον εδ[τι](ν) παντα δια απευταλην πληρωται τα παντα(17) και μετα το
πληρ[ωσαι] | 10 | (τα παντα)(18) αναλη(μ)θη(ν)[α]ι προς τον αποστειλαντα
με . Και επειδαν αναλ[η](μ)θη(ν) αποστε(λ)λω ΣΟΙ τινα των μαθητων μου
οστις(19) ιαδεται (ω)ιω(ψ)η(υ) σου | 11 | το παθος και ζωνη σοι παρα[δ]ω(χ)η και
τοις συν σοι(20) (οδιν)(21) και τη ποδι τη ση μη δεα(22) των εχθρων των
ων εξουσιαν(?) ταυτης εχ[ειν] νοχιν(23) ποτε +)

Ահաւասիկ թարգմանութիւնն .

1 | «Արգար Ուքամայ իշխան Նդեւիոյ Յիսուսի բարերարի փրկչի(1)
որ երեւեցաւ ի քաղաքին(2) Երուսաղեմացոց, ողջոյն : Լուեալ է իմ
վասն քո եւ վասն բժշկութեանդ, որ | 2 | լինին ի ձեռս քո առանց դե-
ղոց եւ արմատոց . զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց
գնալ, եւ զբորոտս սրբես, եւ զայսս պիղծս եւ դեւս հանես, | 3 | եւ որ
միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդութեամբք՝ բժշկես դու, եւ
զմեռեալս յարուցանես : Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն, եղի
ի մտի իմում մի յերկուց . | 4 | կամ թէ դու (Յիսուս) Աստուծոյ իցես
եւ իջեալ յերկնից եւ գործես զայդ . եւ կամ (թէ դու) որդի(ն) Աստուծոյ
իցես (եւ իջեալ յերկնից) առնես զայդ : Անդ վասն այսորիկ գրեցի ես
| 5 | աղաչել զքեզ, զի աշխատ լիցիս եւ եկեցես առ իս, եւ բժշկեսցես
զհիւանդութիւնս զոր ունիմ ես : Նա եւ լուայ, զի Հրէայք արտոնջեն,
զքէն եւ կամին չարչարել զքեզ : Բայց քաղաք մի | 6 | է իմ փոքրիկ
եւ գեղեցիկ, եւ բաւական է մեզ երկոցունցս :

7 . | «Պատասխանի թղթոյն ի Տեառնէ(3) ի ձեռն Անանիայ սուր-
ւանդակի առ Արգար իշխանն .

8 . | Երանի՛ր իցէ, Արգար, այնմիկ որ հաւատայն յիս իբր ոչ իցէ տես-
եալ զիս, զի գրեալ է վասն իմ այսպէս . զի որք տեսանիցեն զիս, ոչ

(9) Եւս . ὑπ'Ἰνδοῦ . — (10) Ἀνανία . — (11) εἶ . — (12) τοὺς ἑωρακότας .
— (13) πιστεύουσιν . — (14) μοι, ἵνα . — (15) πιστεύουσιν . — (16) ἔγραψάς . — (17)
ἐνταῦθα πληρωθεὶς με . — (18) οὕτως . — (19) ἵνα — (20) καὶ τοῖς συν σοὶ πα-
ράδωχται . Վերջ եւսեբեայ օրինակին : — (21) ὥσει? = որպէս : — (22) δὲ? =
ի . Թերեւս տառ պակսի հոս եւ ընթերցումը ճիշտ չըլլայ : — (23) αἰσχύνα
= պղծել բայէն թերեւս :

(1) Եւս . «փրկչի բարերարի» : — (2) յաշխարհին : — (3) «ի Յիսուսէ» :

հաւատասցեն յիս, (եւ) որք ոչն տեսանիցեն, նոյն | 9. | հաւատասցեն եւ կեցցեն : Իսկ վասն այսր զի դրեցիր զու առ իս՝ գալ ինձ առ քեզ՝ միշտ արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես, եւ իբրեւ կատարեցից | 10 | զամենայն ինչ՝ (1) վերացայց առ այն որ առաքեացն զիս : Եւ յորժամ վերացայց՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի իմոց, որ(2) բժշկեսցէ | 11 | զցաւս քո եւ կեանս տացէ քեզ եւ քոյոցդ (որպէս եւ քաղաքիդ՝ մի՛ երբեք պղծեսցէ ոք ի թշնամաց քոց զիշխանութիւն դորա(3)) :

Հիմա դանք գործոյն վաւերականութեան քննութեան, որ ամենակարեւորն է մեզ համար :

Վարդապետութիւն Աղլիի առաջնայ մատենան այսպէս կսկսի(4) . «Յամին երեքհարիւրերորդի քառասներորդի (երրորդի⁵) թագաւորութեանն Յունաց, ի թագաւորութեան Տիբերեայ կայսեր Հոռովմոց, յորժամ թագաւորեաց Արգար որդի Մանուկայ արքայի . . . » Յունաց սեղեկեան թուականն է այս, որ կը համապատասխանէ Քրիստոսի 32 թուականին :

Նդեսիոյ մէջ իշխող բազմաթիւ Արգարներէն եւ Մամնուններէն՝ Մամնու Ը մեռած է, ըստ ասորի ժամանակագրութեան եւ պատմութեան, Քրիստոսի 176 թուականին . իսկ որդին Արգար Ը անմիջապէս յաջորդած է իրեն, 176-213 ըստ Դուտշմիդի կազմած ցուցակին : Արդ Գործի Շարքիլի կը վկայեն թէ Տրայիանոսի ու Արգար Է-ի ժամանակ (108-115) Նդեսիոյ պաշտօնական կրօնն էր տակաւին «հեթանոսութիւնն», եւ միւս կողմանէ զիտեմք թէ նոյն քաղաքին մէջ նստող առաջին քրիստոնէայ թագաւորն եղած է Արգար Ը, կրնանք հետեւցնել թէ Վարդապետութիւն Աղլիի առաքելոյ գրութեան մէջ յիշուածն «Արգար որդի Մանուկայ»՝ որուն հետ իբր թէ թղթակցած է Քրիստոս — ուրիշ մէկը չէր կրնար ըլլալ այլ Արգար Ը, որ քրիստոնէական թուականին երրորդ դարուն սկիզբներն ապրած է, ուրեմն՝ չէր կրնար թղթակցել Քրիստոսի հետ . իսկ Քրիստոսի ժամանակակից Արգարը՝ նոյն անունը կրող թագաւորներէն հինգերորդն է, որ Ուլաւա = շահաւ՝ մականունով ճանչցուած է, «Արշամայ (որդի)» ըստ Լաբուրնեայ եւ ըստ Խորենացւոյ : Եւ իրօք ալ Լաբուրնեա, Եւսեբիոս, Խորենացի եւ այլք այս վերջնոյն (Արգար Ե) կընծայեն Քրիստոսի հետ թղթակցելու պատիւը : Բայց որովհետեւ, ինչպէս ըսինք, Նդեսիոյ արքունիաց կրօնը մի միայն Արգար Ը-ի ժամանակ՝ այսինքն երրորդ դարուն սկիզբը քրիստոնէութեան փոխուեցաւ, բացայայտ կերեւայ թէ այս տեսակ թղթակցութիւն մըն ալ գոյութիւն

(1) Վայս : — (2) «գի» : — (3) Լաբուրն . «Եւ քաղաքդ քո օրհնեալ լիցի, եւ թշնամի մի՛ եւս տիրեսցէ դմա յաւիտեան» : — (4) Մեր առջեւ ունեցածն է Վենետիկ տպագրութիւնն, որ հանուած է Պարիսի Ազգային Մատենադարանին հայերէն ձեռագրաց մէջէն եւ տպուած 1868ին :

չէր կրնար ունենալ Արգարի եւ Քրիստոսի միջեւ : Եւ արդէն Ե-րդ դարուն վերջերը կամ թէ Զ-րդ դարուն սկիզբները Հռովմայ մէջ իսկ անվաւեր նկատուած էր շատերէն (1) : Հնազոյն գրութիւնը որ կը խօսի այս թղթակցութեան վրայ՝ «Վարդապետութիւն Արդէի առաքելոյ» մատենան է, որ սակայն իր արդի վիճակով Գ-րդ դարուն վերջերը եւ կամ Ե-րդ դարուն սկիզբները կազմուած է եւ որուն նախնական խմբագրութիւնն եղած է Գ-րդ դարուն վերջերը, հաւանականաբար հիմն բռնելով քրիստոնէութեան Երեսիոյ մէջ մուտ դառնելուն վրայ յերկրուած եւ տարածուած գրոյցները :

Ուրիշ ապացոյց մըն ալ թէ այս տեսակ «թղթակցութիւն» մը գոյութիւն ունեցած չէ, կրնանք ի մէջ բերել նոյն իսկ Լաբուքնայ հետեւեալ տողերն, որով կը յայտնուի թէ՝ Եւսեբիոսի «Թուղթն Գրեալի Յիսուսէ առ Նա (Արգարի)» խօսքը սուտ է, որովհետեւ Յիսուս «գրաւոր» չէ պատասխանած Արգարի այլ քերականացի :

«Գրեաց (Արգար) այնուհետեւ թուղթ, եւ տայ տանել առ Քրիստոս ի ձեռն Անանայ հաւատարմի : Եւ գնացեալ նորա յՈւռնայէ որ օր չորեքտասան էր արեգ ամսոյ, եւ մտեալ նորա յԵրուսաղէմ որ օր երկուտասան էր ակի ամսոյ, չորեքշաբթի օր, եւ գտեալ նորա զՔրիստոս ի տան Գամաղիէլի քահանայապետին Հրէից, եւ ընթերցեալ զթուղթն առաջի նորա... : Եւ ընկալեալ Յիսուսի զթուղթն ի տան քահանայապետին Հրէից, անէ ցԱնան հաւատարիմ արքային : Երբ եւ ասա Տեսուն լուսն, որ առաքեացն զգեղ առ իս. Երանի՛ է քեզ զի հաւատացեր իս...» : Լաբուքն. 4-5 :

Արգարի այս գրոյցին վրայ չենք ուզեր ծանրանալ այլ եւս, քանի որ մեզմէ առաջ հմուտ գիտնականներ ճառած են այս նիւթին վրայ : անոնցմէ միայն մեր ազգայիններն յիշատակելու համար ցոյց տանք Դուրեանը եւ Տաշեանը. իսկ օտար գիտնականներէ դարձեալ Կարիէրն է որ իր վերջին վճիռն արձակած է այս մասին :

* * *

Անգամ մը հաստատելէ վերջը թէ Արգարեան թղթակցութիւնը գոյութիւն չունի եւ կեղծ է ի հիմանց, կրնանք յայտարարել բացարձակ կերպով թէ այս նորագիւտ յունարէն-գորիական արձանագրութիւնն ալ կեղծագործն է, բայց առ բայ օրինակուած Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութեան ընտիր օրինակէ մը : Այն քանի մը նշանակելի առաւելութիւններն ալ որ կը տեսնենք արձանագրութեանս մէջ, ինչպէս Արգարի *δυναμα* = ասոր, *οὐρανῶ* = «սեաւ» մակդրին գոյութիւնը, «կեանս տացէ... որպէս եւ քաղաքիդ» մի՛ երբեք պղծեսցէ որ ի թշնամեաց քոյ

(1) Հմտ. Mansi, Conc., Ը, էջ 152 :

գիշխանութիւնն դորա» Գրիստոսի ընծայուած նամակին վերջի մասն եւ ուրիշներ, որոնք կը գտնուին «Վարդապետութիւն Ազգէի առաքելոյ» անվաւերական գրոց մէջ եւ կը պակսին առ Եւսեբեայ, անգամ մը եւս կը հաստատեն թէ Եւսեբիոսի այժմեան յունարէն թարգմանութիւնը բաւական խանգարումներ կրած է եւ իր սկզբնական վիճակին մէջ չէ հասած մեզի :

Եթէ արձանագրութիւնս կեղծ չէ եւ Գրիստոսի ժամանակայից է, նախ՝ ի՞նչ գործ ունի Եփեսոսի մէջ փոխանակ գտնուելու յնդեոսիա • երկրորդ՝ ինչո՞ւ յունարէն գրուած ըլլայ — եւ այն դորիական-յունարէ՛ն — փոխանակ գրուած ըլլալու արամեաբէն, որ Պաղեստինի մէջ տիրող լեզուն էր այն ժամանակ, ինչպէս յօդուածին սկիզբներն ալ ըսած ենք • երրորդ՝ հնագրական տեսակէտով՝ արձանագրութեանս մէջ գործածուած տառերը Ե-րդ դարու մէջ գործածուած ձեւերը կը ներկայացնեն • իսկ չորրորդ եւ ամենակարեւորը՝ Եփեսոսի վերոյիշեալ պալատն — որուն աւագ դրան վրայէն գտնուած է այս արձանագրութիւնը, — կառուցուած է Ե-րդ դարուն մէջ : Ուստի կեղրակացնենք եւ կը կրկնենք թէ Եփեսոսի մէջ գտնուած ներկայ արձանագրութիւնն օրինակուած է Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութեան նախնական օրինակի մը վրայէն, եւ զետեղուած է հոն իբրեւ հմայք յանսասան պահպանութիւն արքայական պալատին, — ինչպէս կընեն շատ անգամներ խաչ մը կամ թէ ո եւ է սուրբի մը պատկերը քանդակել տալով : Այսպիսի հմայական մոքով գործածուած համանման արձանագրութիւն մըն ալ գտած է վերջերս Անգղիացի ուղեւոր մը, որ խոստացած է հրատարակել զայն : Եւսեբիոսի գալով, սա իր կարգին այս մասին մեզ աւանդած տեղեկութիւնները քաղած է անվաւերական գրքէ մը որ կընծայուի Լաբուրնեայ :

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ